Ռ. Վ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Իր իրավական դրությամբ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը հանրապետության պետական մարմինների սիստեմում, Գերագույն սովետից հետո, գրավում է երկրորդ տեղը և առաջնային է հանրապետության բոլոր մյուս պետական մարմինների նկատմամբ։ Միևնույն ժամանակ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը, ինչպես պահանջում է հանրապետության սահմանադրությունը, իր ամբողջ գործունեությամբ պատասխանատու և հաշվետու է իրեն ստեղծող մարմնի, այսինքն՝ Գերագույն սովետի առջև։

Հանրապետության պետական մարմինների սիստեմում Գերագույն սովետի նախագահությունը հանդես է գալիս երկակի իրավիճակով՝ որպես պետական իշխանության բարձրագույն մարմին և որպես Գերագույն սովետի մշտական գործող մարմին[1]։

Մինչև հիմա սովետական իրավաբանական գրականությունում անբավարար ուշադրություն է նվիրվել Գերագույն սովետի նախագահության (ինչպես ՍՍՀՄ, այնպես էլ միութենական և ինքնավար հանրապետությունների) կազմավորման, կառուցվածքի և գործունեության կազմակերպական-իրավական հարցերի ուսումնասիրմանը, չնայած, որ այն ունի տեսական և պրակտիկ լուրջ նշանակություն։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն, ընտրվում է չորս տարի ժամանակով, այսինքն՝ նրա լիազորությունների ժամկետը հավասար է նրան կազմավորող մարմնի՝ հանրապետության Գերագույն սովետի լիազորությունների ժամկետին։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության լիազորությունները պահպանվում են մինչև հանրապետության նոր գումարման Գերագույն սովետի կողմից նոր կազմով նախագահության կազմավորումը։

Այն հանգամանքը, որ նախագահությունը ստեղծվում է հանրապետության ներկայացուցչական գերագույն հիմնարկի, այլ ոչ թե անմիջականորեն բնակչության կողմից, նշանակում է, որ Գերագույն սովետի նախագահության տվյալ կազմը, տվյալ գումարման Գերագույն սովետից է իրավունք ստանում իրացնելու սահմանադրական իր իրավասությունները, և, դրա հետ մեկտեղ, նախագահությունը կազմելու այդպիսի կարգն արդեն կանխորոշում է այն, որ նախագահությունը հաշվետու է իրեն կազմած մարմնի առջև ու ենթակա է նրա վերահսկողությանը։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն ընտրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին սեսիայում։ Սակայն հանրապետության գործող սահմանադրությամբ նախատեսված չէ, թե Գերագույն սովետի հիմնադիր սեսիայի որ նիստում պետք է կայանվի նրա նախագահությունը։ Այդ է պատճառը, որ տվյալ հարցը տարբեր գումարումների Գերագույն սովետի կողմից միատեսակ չի լուծվել։ Այսպես, Հայկական ՍՍՀ առաջին և երկրորդ

---

[1] *Այս հարցի առթիվ սովետական իրավաբանական գրականության մեջ միասնական կարծիք գոյություն չունի, և տարբեր հեղինակների կողմից արտահայտված կարծիքները հաճախ բավական հակասում են միմյանց, սակայն վերոհիշյալ թեզի մանրամասն հիմնավորումը տվյալ հոդվածի խնդիրների մեջ չի մտնում։ Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ Գերագույն սովետի Նախագահության պետական մարմինների սիստեմում ունեցած իրավիճակին նույնանման գնահատական է տրվել մի շարք աշխատություններում, այսպես, օրինակ, տե՛ս* М. Г. Кириченко, Народный Парламент Российской федерации, изд. «Советская Россия», Москва, 1963 г., стр. 80, И. Н. Кузнецов, Законодательная и исполнительная деятельность высших органов власти, изд. «Юрид. лит.», Москва, 1965 г., стр. 107. А. В. Мицкевич. Акты высших органов Советского государства, Москва, 1967 г., изд. «Юрид. лит.», стр. 91.

գումարումների Գերագույն սովետի առաջին սեսիաներում Գերագույն սովետի նախագահությունն ընտրվել է սեսիայի աշխատանքի երկրորդ օրը՝ երրորդ նիստում[2]։

Այս հարցի լուծմանն այլ կերպ մոտեցավ երրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան, որը տեղի ունեցավ 1951 թ. մարտի 30—31-ին։ Այստեղ Գերագույն սովետը նախագահություն ընտրեց սեսիայի աշխատանքի առաջին օրը, առաջին նիստում[3]։

Չորրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան 1955 թ. Գերագույն սովետի նախագահություն ընտրեց արդեն իր աշխատանքի վերջում՝ երկրորդ օրը, չորրորդ նիստում[4]։

Այս հարցը երրորդ գումարման Գերագույն սովետի հիմնադիր սեսիայի նման լուծեցին հինգերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան (1959 թ. ապրիլի 15—16)[5] և վեցերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան (1963 թ. ապրիլի 3)[6]։

Իսկ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ներկայումս գործող նախագահությունն ընտրվել է 1967 թ. յոթերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիայի երկրորդ նիստում, սեսիայի աշխատանքի վերջին օրը[7]։

Ինչպես տեսնում ենք, տարբեր գումարումների Գերագույն սովետի հիմնադիր սեսիաները Գերագույն սովետի մշտական գործող մարմինը, միաժամանակ պետական իշխանության մյուս բարձրագույն մարմինը, կազմելուն միատեսակ չեն մոտեցել։

Գերագույն սովետի նախագահությունը սովորաբար ստեղծվում է Գերագույն սովետի դեկավար օրգանների և մշտական հանձնաժողովների ընտրություններից հետո։

Գերագույն սովետի նախագահության կազմի մասին առաջարկությունները մտցվում են կամ ավագների խորհրդի անունից[8], կամ կուսակցական խմբի և ավագների խորհրդի անունից՝ համատեղ[9]։ Սակայն Հայկական ՍՍՀ երկրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիայում 1947 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության կազմի վերաբերյալ առաջարկությունը սեսիայի քննությանը մտցվել է դեպուտատների խմբի անունից[10]։

Հայկական ՍՍՀ յոթերորդ գումարման Գերագույն սովետի ներկայումս գործող նախագահության կազմի վերաբերյալ առաջարկություններ մտցվել է կուսակցական խմբի և ավագների խորհրդի կողմից, ըստ որում Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի թեկնածությունն առաջադրել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարը[11]։

Գերագույն սովետի յուրաքանչյուր դեպուտատ իրավունք ունի ոչ միայն մասնակցելու Գերագույն սովետի նախագահության կազմում առաջադրված թեկնածությունների քննարկմանը, այլև առաջադրելու իր թեկնածությունները։ Բայց մինչև այժմ հայտնի չէ մի դեպք, որ առանձին դեպուտատներ առաջարկություններ մտցրած լինեն Գերագույն սովետի նախագահության կազմի մասին, չնայած նախագահողը սովորաբար նրանց առաջարկում է հանդես գալ։

---

2 Տե՛ս Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի առաջին սեսիան, սղագրական հաշվետվություն, Երևան, 1939 թ., էջ 67։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի երկրորդ գումարման նիստերը, առաջին սեսիա, Երևան, 1948 թ., էջ 37։

3 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1952 թ., էջ 27։

4 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1955 թ., էջ 194։

5 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1959 թ., էջ 23։

6 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1963 թ., էջ 25։

7 Հայկական ՍՍՀ յոթերորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա. սղագիր հաշվետվություն, Երևան, 1967 թ., էջ 140։

8 Հայկական ՍՍՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին սեսիա, 1938 թ., երրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիա, 1951 թ., չորրորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիա, 1955 թ.։

9 Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գումարումների Գերագույն սովետի առաջին սեսիաները, համապատասխանաբար 1959, 1963, 1961 թթ., նիստերի սղագիր հաշվետվություններ։

10 Հայկական ՍՍՀ երկրորդ գումարման Գերագույն սովետի նիստը, սղագիր հաշվետվություն, Երևան, 1948 թ., էջ 37։

11 Հայկական ՍՍՀ յոթերորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, սղագրական հաշվետվություն, առաջին սեսիա, Երևան, 1967 թ., էջ 140։

Գերագույն սովետի նախագահության ընտրության ժամանակ քվեարկության կարգն ամեն անգամ որոշում է Գերագույն սովետը, և դա սովորաբար կատարվում է բաց քվեարկությամբ։ Սահմանված չէ նաև, թե ինչպես պետք է կատարվի Գերագույն սովետի նախագահության կազմում առաջադրված թեկնածությունների քվեարկությունը. ամբողջ ցուցակո՞վ, թե անհատապես։

Այս հարցում փորձը ցույց է տալիս հետևյալը։

Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ գումարումների Գերագույն սովետի առաջին սեսիաներում նախագահության կազմն ընտրվել է անհատական քվեարկման կարգով[12]։

Այդ հարցն այլ կերպ է լուծվել հինգերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիայում, երբ նախագահության նախագահի, նրա տեղակալների և նախագահության քարտուղարի թեկնածությունները քվեարկվել են անհատապես, իսկ նախագահության անդամներինը՝ ցուցակով[13]։

Իսկ վերջին երկու գումարումների Գերագույն սովետի առաջին սեսիաներում անհատապես քվեարկվել է միայն Գերագույն սովետի նախագահության նախագահի թեկնածությունը, տեղակալները, քարտուղարը և նախագահության անդամներն ընտրվել են ցուցակով քվեարկվելու միջոցով[14]։

Մեր կարծիքով, Գերագույն սովետի նախագահության կազմումը ոչ թե բաց (որը բնորոշ էր մեր պետության զարգացման առաջին փուլի համար), այլ փակ (գաղտնի) քվեարկությամբ, ոչ միայն ավելի է համապատասխանում սովետական ընտրական սիստեմի դեմոկրատական սկզբունքներին, որոնց հիմնական պահանջներից մեկն է գաղտնի քվեարկության կիրառումը, այլև կբարձրացնի Գերագույն սովետի նախագահության պատասխանատվությունն իրեն ստեղծող օրգանի առջև[15]։

Հայկական ՍՍՀ սահմանադրությամբ նախատեսված է նաև հանրապետության Գերագույն սովետի նախագահության թվական կազմը (հոդված 28), բայց, չնայած դրան, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության թվական կազմը միատեսակ չի եղել, այն տարբեր ժամանակներում տարբեր է եղել։

Հայկական ՍՍՀ առաջին գումարման Գերագույն սովետի նախագահությունը, որն ընտրվեց 1938 թ. հուլիսի 13-ին, բաղկացած էր նախագահության նախագահից, երկու տեղակալներից, նախագահության քարտուղարից և նախագահության ինը անդամներից[16]։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության թվական կազմն անփոփոխ մնաց մինչև 1959 թ. ապրիլի 15-ը, երբ հինգերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան, ընտրելով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նոր նախագահություն, նրա անդամների թիվը հասցրեց 15-ի[17]։

Իսկ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի այժմ գործող նախագահությունը, որն ընտրվել է հանրապետության Գերագույն սովետի առաջին սեսիայում 1967 թ. ապրիլի 15-ին, արդեն ունի թվական այլ կազմ. նախագահ, երկու տեղակալ, նախագահության քարտուղար և 13 անդամ[18]։

---

12 Տե՛ս առաջին, երկրորդ, երրորդ ու չորրորդ գումարումների Գերագույն սովետի առաջին սեսիաների սղագիր հաշվետվությունները՝ համապատասխանաբար 68-րդ, 38-րդ, 27-րդ և 196-րդ էջերը։

13 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագրական հաշվետվություն, Երևան, 1959 թ., էջ 25։

14 Տե՛ս Հայկական ՍՍՀ վեցերորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, առաջին սեսիա, սղագիր հաշվետվություն, Երևան, 1963 թ., էջ 29, յոթերորդ գումարման Գերագույն սովետի նիստերի առաջին սեսիա, Երևան, 1967 թ., էջ 143։

15 ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը ոչ թե բաց, այլ գաղտնի քվեարկությամբ է առաջարկում կազմել նաև Մ. Ա. Շաֆիրը. տե՛ս М. А. Шефир, Организация работы Верховного Совета СССР и ее правовое закрепление. «Правоведение», изд. Ленинградского Университета, 1966 г., № 3, стр. 23.

16 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին սեսիա, սղագիր հաշվետվություն, Երևան, 1939 թ., էջ 67։

17 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերը, սղագրական հաշվետվություն, Երևան, 1959 թ., էջ 24։

18 Հայկական ՍՍՀ յոթերորդ գումարման Գերագույն սովետի նիստերի արձանագրությունները, սղագիր հաշվետվություն, Երևան, 1967 թ., էջ 141։

Ինչպես տեսնում ենք, դա Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ամենամեծ կազմն է բոլոր նախորդների համեմատությամբ՝ 17 մարդ. մինչդեռ 1938 թ. առաջին գումարման Գերագույն սովետի առաջին սեսիայում նախագահության կազմում ընտրվել էր միայն 13 մարդ։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության այդպիսի կազմը կապված է հանրապետության առանձնահատկությունների՝ ազգային կազմավորումների բացակայության հետ, նախագահության աշխատանքի ծավալի հետ և պետք է ապահովի պետական ղեկավարության անընդհատությունը և իշխանության ֆունկցիաների իրականացումը։

Նախագահության կազմում, բացի ղեկավար կուսակցական ու սովետական աշխատողներից, ընտրվում են անմիջականորեն արտադրությունում աշխատող անձինք, մեր զինված ուժերի ներկայացուցիչները, կուլտուրայի գործիչները։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության կազմում ընտրված դեպուտատները ներկայացնում են հանրապետության բնակչության բոլոր խավերը։ Այսպես, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ներկայումս գործող նախագահության մեջ են ընդգրկված հանրապետության բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության լավագույն ներկայացուցիչները, ճանաչված պետական և զինվորական գործիչներ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարը և ուրիշներ։

Ոչ մի պետական օրգան, բացառությամբ Գերագույն սովետի, իրավասու չէ փոփոխություններ մտցնելու Գերագույն սովետի նախագահության կազմի մեջ, և տվյալ իրավունքը նրա բացառիկ արտոնությունն է, քանի որ կապված է Հայկական ՍՍՀ սահմանադրության համապատասխան հոդվածի (հոդվ. 28) փոփոխման հետ։

Սակայն Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1964 թ. մարտի 31-ի որոշմամբ[19] մեծացրեց վեցերորդ գումարման Գերագույն սովետի առաջին սեսիայում ընտրված նախագահության նախագահի տեղակալների թիվը, այդպիսով նաև Գերագույն սովետի նախագահության թվական կազմը։

Պարզ է, որ այդպիսի որոշումը պետք է անպայման հաստատվի Գերագույն սովետի կողմից, բայց, այնուամենայնիվ, սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում Գերագույն սովետի նախագահության թվական կազմի փոփոխումը նախագահության կողմից սխալ է և չպետք է թույլ տրվի պետական իշխանության գերագույն օրգանների պրակտիկայում։

Միութենական հանրապետությունների Գերագույն սովետների նախագահությունների թվական կազմը միատեսակ չէ և որոշվում է միութենական յուրաքանչյուր հանրապետության սահմանադրությամբ, հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները։ Օրինակ, ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նախագահության կազմում որպես նախագահի տեղակալներ կան բոլոր ինքնավար հանրապետությունների ներկայացուցիչները։ Ազգային ներկայացուցչության սկզբունքով են կազմված նաև Վրացական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետների նախագահությունները։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության թվական կազմը ևս մեր պետության զարգացման տարբեր փուլերում միատեսակ չի՝ եղել։ Այսպես, առաջին գումարման Գերագույն սովետի նախագահության նախագահն ունեցել է 11 տեղակալ, իսկ այնուհետև, միութենական հանրապետությունների թվի մեծացման կապակցությամբ, աճել է նաև Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալների թիվը՝ յուրաքանչյուր միութենական հանրապետությունից մեկ ներկայացուցիչ սկզբունքով։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության թվական կազմը քառասնական թվականներին արդեն հասել էր 42 մարդու, սակայն հետագայում այն կրճատվեց և ներկայումս բաղկացած է 37 մարդուց։

Այդպիսի կազմը ոչ միայն ապահովում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցչական բնույթը, այլ նաև թույլ է տալիս ժամանակին և օպերատիվորեն լուծելու նրա առջև դրված բազմաթիվ խնդիրները։

Հայկական ՍՍՀ 1937 թ. սահմանադրությամբ, ի տարբերություն 1922 թ. սահմանադրության, Գերագույն սովետի նախագահության մեջ չէին կարող ընտրվել Գերագույն սովետի նախագահը, նրա տեղակալներն ու կառավարության՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի, անդամները։ Գերագույն սովետի նախագահության մեջ չէին կարող ընտրվել նաև Գերագույն դատարանի նախագահն ու հանրապետության դատախազը։

---

19 Տե՛ս վեցերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1964 թ., արձ. 3, գործ 4։

Չնայած այդ սկզբունքը տառացիորեն արտացոլված չէր սահմանադրության մեջ, բայց բխում էր սահմանադրական այն հիմնական սկզբունքներից, որ Գերագույն սովետի նախագահությունը հաշվետու է Գերագույն սովետի առջև, իսկ կառավարությունը՝ Մինիստրների սովետը, և գերագույն դատարանը հաշվետու են սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում Գերագույն սովետի նախագահության առջև։

Գերագույն սովետի նախագահության լիազորությունների ժամկետն սկզբունքորեն կախված է նրան կազմավորող օրգանի՝ Գերագույն սովետի լիազորությունների ժամկետից, բայց միաժամանակ Գերագույն սովետի նախագահության կազմի դեպուտատական մանդատների լիազորությունների ժամկետը մի փոքր ավելի մեծ է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի մյուս դեպուտատների լիազորությունների համեմատությամբ, քանի որ հանրապետության սահմանադրության 36-րդ հոդվածով նախատեսված է, որ «Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի լիազորությունները լրանալուց հետո Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը պահպանում է իր լիազորությունները այնքան ժամանակ մինչև Հայկական ՍՍՀ նորընտիր Գերագույն սովետը կազմի Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նոր նախագահություն»։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը իր ստեղծման պահից եղել է կոլեգիալ օրգան։ Դրանից բխում է, որ ամեն մի որոշում կարող է ընդունվել միայն Գերագույն սովետի նախագահության անդամների կողմից կոլեգիալ քննարկումից հետո միայն։

Գերագույն սովետի նախագահության բոլոր անդամներն ունեն միատեսակ իրավունքներ։ Գերագույն սովետի նախագահության նախագահը, նրա տեղակալներն ու նախագահության քարտուղարը հարցերի լուծման գործում ոչ մի հատուկ արտոնություն կամ լիազորություն չունեն։ Դրա հետ մեկտեղ որոշ լիազորություններ ենթակա են կենսագործման միայն անհատական կարգով։ Գերագույն սովետի նախագահության նախագահը հրավիրում է նախագահության նիստը և ինքն էլ նախագահում, Գերագույն սովետի նախագահության քարտուղարի հետ միասին ստորագրում է Հայկական ՍՍՀ օրենքները և Գերագույն սովետի նախագահության հրամանագրերը, պարգևատրվածներին հանձնում պատվոգրերը, Հայկական ՍՍՀ-ի անունից հարաբերությունների մեջ է մտնում իշնպես միութենական հանրապետությունների, այնպես էլ օտար պետությունների ներկայացուցիչների հետ, ընդունում է քաղաքացիներին, առհասարակ գլխավորում է Գերագույն սովետի նախագահության աշխատանքները։

Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալները Գերագույն սովետի նախագահության նախագահին օգնում են նախագահության գործունեությունը ղեկավարելու, գլխավորում նախագահության գործունեության առանձին ճյուղերը, ընդունում քաղաքացիներին, իսկ նախագահի բացակայության ժամանակ տեղակալներից մեկը փոխարինում է նրան[20]։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղարը գլխավորում է Գերագույն սովետի նախագահության ամբողջ ապարատը, կազմակերպում նրա ընթացիկ աշխատանքը, մասնակցում նախագահության նիստերին և կատարում այլ աշխատանքներ։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պաշտոնական ապարատը բաղկացած է գրասենյակից (հատուկ մաս, ընդհանուր մաս, հաշվապահություն, տնտեսական մաս և արխիվ), ընդունարանից, սովետների աշխատանքի հարցերի բաժնից, պարգևների խմբից և հրատարակչական խմբից։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ապարատի աշխատանքի ներքին կարգի մասին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1961 թ. հուլիսի 1-ի որոշմամբ սահմանվել են Գերագույն սովետի նախագահության ներքին մարմինների խնդիրները, լիազորություններն ու պարտականությունները[21]։ Ըստ այդ որոշման, նախագահության գրասենյակն ըստ բաղվում է ընդհանուր գործավարությամբ, ֆինանսական տնտեսությամբ, կադրերի հաշվառմամբ, գրադարանի և արխիվի աշխատանքով, սպասարկում է Գերագույն սովետի սեսիաները, իրականացնում է նախագահության նիստերի կազմակերպական նախապատրաստումը (կազմում է նիստի օրակարգը, բաժիններից հավաքում է նախագծերը, հրամանագրերը, որոշումներն ու մյուս նյութերը, բազմացնում ու նախագահության անդամներին է ուղարկում դրանք) և այլն։

---

20 Ինչպես հայտնի է, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահը, ինչպես և միութենական հանրապետությունների Գերագույն սովետների նախագահությունների նախագահները ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալներն են և իրենց պարտականությունները հերթով կատարում են մեկական ամիս.

21 Տե՛ս Հայկական ՍՍՀ հինգերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1961 թ., արձ. հատ. 10, գործ 17։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի ընդունարանը կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունը նախագահի, նրա տեղակալների, նախագահության քարտուղարի և անդամների կողմից, նրանց հանձնարարությամբ ուսումնասիրում և տեղերում ստուգում է քաղաքացիների առանձին դիմումներ ու գանգատներ, հետևում է, որ պետական կառավարման մարմինները, կազմակերպություններն ու հիմնարկները կատարեն դիմումների ու գանգատների առթիվ տրված ցուցումներն ու կարգադրությունները, պարբերաբար տեղեկանքներ է նախապատրաստում աշխատավորներից ստացված դիմումների ու գանգատների բնույթի մասին։

Սովետների աշխատանքի հարցերի բաժինը նախապատրաստում և նախագահության քննարկմանն է ներկայացնում հարցեր՝ կապված Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի օրենքների և որոշումների, նախագահության հրամանագրերի և որոշումների կենսագործման հետ, ուսումնասիրում և ընդհանրացնում է աշխատավորների դեպուտատների տեղական սովետների կազմակերպական մասսայական աշխատանքը, նրանց ցույց տալիս գործնական օգնություն, նախապատրաստում վարչա-տերիտորիալ վերափոխումների նյութերը, կազմակերպա-տեխնիկապես նախապատրաստում ՍՍՀՄ Գերագույն սովետի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների ու ժողովրդական դատարանների ընտրությունները, Գերագույն սովետի սեսիաները, հավաքում ու մշակում է նախագահության քննարկմանը ներկայացվող հրամանագրերի ու որոշումների հետ կապված տեղեկանքներն ու նախագծերը։

Իրավաբանական բաժինը կազմում է օրենքների, հրամանագրերի և նորմատիվ բնույթի որոշումների նախագծերը, քննության է նախապատրաստում դատապարտվածների ներման խնդրանքները, ՍՍՀՄ քաղաքացի ընդունելու վերաբերյալ միջնորդությունները, վերահսկում և ստուգում է Հայկական ՍՍՀ օրենքների, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի որոշումների, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի ու նորմատիվ որոշումների կատարման ընթացքը և այդ հարցերի առթիվ նախապատրաստում է որոշումների նախագծեր՝ նախագահության նիստերում քննության առնելու համար, հետևում է, որ հրամանագրերի, որոշումների բոլոր նախագծերը, ինչպես նաև նախագահության բաժինների կողմից նախապատրաստվող իրավական հարցերին վերաբերող նամակները համապատասխանեն օրենքին, ստուգում ու թույլատրում է նախագծերը և դրանց առթիվ տալիս է անհրաժեշտ իրավաբանական կոնսուլտացիա, հրատարակման է նախապատրաստում օրենսգրքերը, կազմում է օրենքների, հրամանագրերի, որոշումների և կարգադրությունների վերաբերյալ տեղեկատուներ։

Պարգևների խումբը նախապատրաստում է պարգևատրման և պատվավոր կոչումների շնորհման հետ կապված հարցերը, կազմակերպում է փաստաթղթերի ձևակերպումը, շքանշանների, մեդալների ու պատվոգրերի հանձնումը, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործադիր կոմիտեներին պրակտիկ օգնություն է ցույց տալիս բազմազավակ մայրերին պարգևատրման ներկայացնելու և նրանց ու մյուս անձանց շքանշաններ, մեդալներ ու պատվոգրեր հանձնելու գործում։

Հրատարակչական խումբն ապահովում է միութենական նշանակություն ունեցող ակտերի (ՍՍՀՄ օրենքների, ՍՍՀՄ Գերագույն սովետի որոշումների, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և որոշումների հայերեն և ռուսերեն հրատարակումը «Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի տեղեկագրում», Հայկական ՍՍՀ օրենքների, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի որոշումների և մյուս ակտերի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի ու որոշումների, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերի սղագրական հաշվետվությունների հրատարակումը հայերեն, ռուսերեն և աղրբեջաներեն լեզուներով։

Նախագահության բաժինների, խմբերի վարիչները, ինչպես նաև գրասենյակի պետը իրավունք ունեն Հայկական ՍՍՀ մինիստրություններից, հիմնարկներից, ձեռնարկություններից ու կազմակերպություններից, աշխատավորների դեպուտատների տեղական սովետների գործադիր կոմիտեներից պահանջելու Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանն անհրաժեշտ նյութեր, տեղեկանքներ և այլն։

Հանրապետության առանձին բնակավայրերի վերանվանման հարցերը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քննության համար նախապատրաստելու, գոյություն ունեցող անուններն ու դրանց տառադարձությունները ճշտելու նպատակով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը կից գործում է նաև Հայկական ՍՍՀ բնակավայրերի վերանվանման առաջարկությունները նախապատրաստող հանձնաժողով։

Գերագույն սովետի նախագահության գործունեության կազմակերպական-իրավական հիմնական ձևն են հանդիսանում Գերագույն սովետի նախագահության կանոնավոր հրավիրվող նիս-

սերը, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, որպես կանոն, առնվազն ամիսը մեկ անգամ[22]։ Նախագահության նիստերում կոլեգիալ կարգով քննարկում և լուծվում են նախագահության իրավասության մեջ մտնող հիմնական հարցերը։ Գերագույն սովետի նախագահության ոչ մեծ կազմը թույլ է տալիս կանոնավոր կերպով նիստեր հրավիրել և լուծել նրա իրավասությանը վերաբերող բազմաթիվ հարցեր։ Սակայն ո՛չ հիմնական օրենքը, ո՛չ մյուս իրավական ակտերը չեն նշում, թե Գերագույն սովետի նախագահության նիստը անդամների ինչպիսի քվորումի դեպքում է իրավասու։

Հայկական ՍՍՀ գործող սահմանադրության ընդունմամբ վերացվեց մինչ այդ գործող Հայկական ՍՍՀ Կենտգործկոմի փոքր նախագահությունը, որը, չնայած իր օժանդակ բնույթին Կենտգործկոմի նախագահության անդամների հարցման միջոցով բավական հաճախ ընդունում էր իրենց նշանակությամբ բնավ ոչ երկրորդական որոշումներ։

Սակայն, չնայած այդպիսի մարմնի բացակայությանը, գործունեության հարցման կարգը, որը բնորոշ էր Կենտգործկոմի նախագահության համար, կիրառվում է նաև Գերագույն սովետի նախագահության կողմից։

Ճիշտ է, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նիստերը վերջին տասնամյակում հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ, բայց և այնպես, նախագահության անդամների հարցման միջոցով խիստ կարևոր ու սկզբունքային քիչ հարցեր չեն լուծվում։ Այսպես, Գերագույն սովետի նախագահության անդամների հարցման կարգով 1957 թվականի օգոստոսի 17-ին ընդունվեց վարձով ուղևորներ ու բեռներ փոխադրելու համար անհատական օգտագործման մեքենաների ու մոտոցիկլետների տերերին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին հրամանագիրը, որն այդ արարքի համար նախատեսում էր ազատազրկում մինչև 3 տարի ժամկետով և ավտոմենքենայի կամ մոտոցիկլետի բռնագրավում[23]։

Այդպես ընդունվեց 1963 թվականի հուլիսի 12-ի հրամանագիրը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի կինեմատոգրաֆիայի պետական կոմիտե ստեղծելու մասին[24], նաև՝ 1967 թվականի փետրվարի 16-ի հրամանագիրը Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի նախագահին իր պարտականություններից ազատելու, և այլ անձի Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահի պաշտոնակատար նշանակելու մասին[25]։

Մեր կարծիքով, Գերագույն սովետի նախագահության անդամների հարցման կարգով ընդունվող որոշումների թիվը պետք է հասցվի նվազագույնի, ըստ որում հարցման կարգով պետք է լուծվեն ամենաանհրաժեշտ, ներքին ու կազմակերպական հարցերը, որովհետև այդ դեպքում հնարավոր չէ հարցերը քննարկել այնպես հանգամանորեն ու բազմակողմանիորեն, ինչպես նիստերում։

Գործունեության հարցման կարգը, որը տեղ է գտել Գերագույն սովետի նախագահության աշխատանքում, անցանկալի է նաև այն իմաստով, որ կարող է հանգեցնել Գերագույն սովետի նախագահության նիստերի անկանոն հրավիրման։

Գերագույն սովետի նախագահության գործունեությունից երևում է, որ այն՝ 1942 և 1945 թվականներին գումարել է ընդամենը հնգական նիստ[26]։ Եթե դա այս կամ այն կերպ կարելի է բացատրել պատերազմական իրադրությամբ, ապա ինչո՞վ բացատրել այն փաստը, որ Հանրապետության Գերագույն սովետի նախագահությունը 1951 և 1952 թվականներին ունեցել է ընդամենը վեցական նիստ, ըստ որում մեկ նիստից մինչև մյուսն ընկած ժամանակամիջոցը երբեմն կազմել է մի քանի ամիս։ Այսպես, Հայկական ՍՍՀ երրորդ գումարման Գերագույն սովետի նախագահության առաջին նիստը տեղի է ունեցել 1951 թ. հունվարի 31-ին, իսկ երկրորդը՝ միայն 1951 թ. մայիսի 10-ին։ Կամ, 1952 թ. հունվարի 25-ից հետո հանրապետության Գերագույն սո-

---

22 Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն այս հարցի առթիվ 1959 թվականի ապրիլի 17-ին ընդունեց հատուկ որոշում՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նիստեր հրավիրելու մասին։ Տե՛ս Հայկական ՍՍՀ չորրորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստի արձանագրությունը. արձ. 3, գործ 2։

23 Տե՛ս նույն գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1957 թ., արձ. № 11։

24 Վեցերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1963 թ., արձ. 5։

25 Յոթերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1967 թ., արձ. 2։

26 Առաջին գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1942 թ. և 1945 թ.։

վետի նախագահությունը հաջորդ նիստը հրավիրել է գրեթե երեքուկես ամիս հետո՝ նույն տարվա մայիսի 8-ին և այլն։

Ուստի զարմանալի չէ, որ Գերագույն սովետի նախագահության որոշումների գրեթե կեսն ընդունվել է նախագահության անդամների հարցման միջոցով։

ՍՄԿԿ XX համագումարից հետո ներկայացուցչական մարմինները նկատելիորեն աշխուժացրել են իրենց աշխատանքը։ Գերագույն սովետի նախագահությունն սկսել է նիստեր հրավիրել ավելի կանոնավոր ու հաճախակի։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ սկսած 50-ական թվականների կեսերից Գերագույն սովետի նախագահությունն արդեն նիստեր է ունեցել տարեկան առնվազն 12—13 անգամ։

Նիստերի հաճախակի հրավիրումը Գերագույն սովետի նախագահությանը թույլ է տալիս ժամանակին իր վերաբերմունքը ցույց տալու և լուծելու իր իրավասության մեջ մտնող բոլոր հարցերը, որոնք, ինչպես հայտնի է, վերաբերում են հանրապետության ներքին, արտաքին ու տնտեսական կյանքի ամենաբազմազան խնդիրներին։

Գերագույն սովետի նախագահության աշխատանքում հարցման կարգի առկայությամբ է բացատրվում նաև այն, որ նախագահության նիստերում երբեմն քննարկվող հարցերի մեծամասնությունը կազմել են բնակավայրերի, հիմնարկների, դպրոցների վերանվանման, պարգևատրման, ներման հետ առնչվող հարցերը, մինչդեռ իրենց նշանակությամբ ավելի կարևոր հարցեր, ինչպիսիք են, օրինակ, օրենսդրության փոփոխումների, կառավարման կենտրոնական մարմինների վերակազմման, նոր մարմինների ստեղծման կամ որոշ մարմինների վերացման, մինիստրների կամ այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակման հրամանագրերի ընդունումը, տեղի է ունեցել նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում, հարցման կարգով։

Բացի դրանից, Գերագույն սովետի նախագահության գործունեության պրակտիկայում հաճախ ծագում են հարցեր, որոնք պետք է արագորեն լուծվեն, բայց քանի որ դրանք աննշան են, նպատակահարմար չի լինում հրավիրել նախագահության նիստ։ Ինչպես հայտնի է, նման հարցերն առաջ մեծ մասամբ լուծել է կենտգործկոմի փոքր նախագահությունը, որի գործունեության փորձը, ցավոք, քիչ է ուսումնասիրված։

Մեզ թվում է, որ նպատակահարմար է իրենց նշանակությամբ երկրորդական որոշ հարցերի լուծումը դնել նախագահության նախագահի և քարտուղարի վրա, նախապես հաստատելով այդ կարգով լուծման ենթակա հարցերի ցանկը։

Գերագույն սովետի նախագահության նիստերում լուծվելիք հարցերը նախապես խնամքով նախապատրաստվում են նախագահության ամբողջ ապարատի կողմից։ Երբեմն հարցերի նախապատրաստման ներգրավվում են ոչ միայն Գերագույն սովետի դեպուտատները, մշտական հանձնաժողովների անդամները, այլև ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի մասնագետներ, որը թույլ է տալիս հարցերը նախապատրաստել բազմակողմանիորեն, հաշվի առնել բոլոր հանգամանքները։

Այսպես, 1965 թվականի փետրվարի 25-ի Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նիստում քննարկվել է «Հանրապետությունում մանկական ասորտիմենտի ապրանքների արտադրությունն ավելացնելու, ասորտիմենտն ընդլայնելու, որակը բարձրացնելու և առևտուրը բարելավելու մասին» հարցը, որի նախապատրաստման ներգրավվել են Գերագույն սովետի առևտրի, արդյունաբերության և տրանսպորտի մշտական հանձնաժողովները, ինչպես նաև համապատասխան ճյուղերի մասնագետները[27]։

Ցնցած նախագահության մեջ մտնում են Գերագույն սովետի սահմանափակ թվով դեպուտատներ՝ ընդամենը 17 մարդ, բայց նրա նիստերին մասնակցում են պետական բազմաթիվ մարմինների, մինիստրությունների, պետական կոմիտեների, տեղական սովետների, դատախազության, դատարանի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Երբ Գերագույն սովետի մշտական հանձնաժողովը նախապատրաստում է այս կամ այն հարցը, նախագահության նիստին են հրավիրվում տվյալ մշտական հանձնաժողովի ղեկավարներն ու անդամները, ինչպես նաև այն հիմնարկների ու պետական օրգանների ներկայացուցիչները, որոնց հետ անմիջականորեն առնչվում է քննարկվող հարցը։

Անմիջականորեն կառավարման օրգաններին վերաբերող ու կարևոր նշանակություն ունեցող հարցեր լուծելու դեպքում Գերագույն սովետի նախագահությունը կարող է նաև նիստ հրավիրել

---

27 Հայկական ՍՍՀ վեցերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1965 թ., արձ. 2, գործ. 1։

Մինիստրների սովետի հետ միասին։ Այսպես, 1957 թվականի հուլիսի 17-ին հրավիրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների սովետի համատեղ նիստ, որտեղ քննարկվել է հանրապետության բնակավայրերի բարեկարգման և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների կազմակերպական-մասսայական աշխատանքի ուժեղացման միջոցառումների հարցը[28]։

Գերագույն սովետի նախագահության նիստերը հրավիրվում են ինչպես սեսիաների միջև ընկած ժամանակաշրջանում, այնպես էլ սեսիաների ժամանակ։ Օրինակ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը նիստեր է հրավիրել 1958 թվականի հունվարի 31-ին[29], 1959 թվականի նոյեմբերի 20-ին[30], 1963 թվականի մայիսի 11-ին[31] և այլն, երբ համապատասխանաբար տեղի են ունեցել Հայկական ՍՍՀ չորրորդ գումարման Գերագույն սովետի վեցերորդ սեսիան (29—31/1—1958 թ.), հինգերորդ գումարման Գերագույն սովետի երկրորդ սեսիան (19—20/1—1959 թ.), հինգերորդ գումարման Գերագույն սովետի յոթերորդ սեսիան (10—11/5—1962 թ.) և այլն։

---

28 Տե՛ս Հայկական ՍՍՀ չորրորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1957 թ., արձ. 9, գործ 11։

29 Տե՛ս Հայկական ՍՍՀ չորրորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1958 թ., արձ. 4։

30 Տե՛ս Հայկական ՍՍՀ հինգերորդ գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունը, 1959 թ., արձ. 11։

31 Տե՛ս նույն գումարման Գերագույն սովետի նախագահության նիստերի արձանագրությունները, 1962 թ., արձ. 7։